ՄԱՏԵՆԱՇԱՐ "ՄԱՐՄԱՐԱ,, ԹԻՒ 7



ԱՆՈՒՇ

ՎԻՊԵՐԳ
ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

ԿԱՂԱՆԴԻ ՆՈՒԷՐ
"ՄԱՐՄԱՐԱ,, Օրաթերթի

ԽՄԲԱԳՐԵՑ
ՍՈՒՐԷՆ ՇԱՄԼԵԱՆ

Գ. Տպագրութիւն

ԳԻՆ 100 ՂՐՇ.
ԻՍԹԱՆՊՈՒԼ 1948

2081

Մատենաշար «ՄԱՐՄԱՐԱ» Թիւ 1

ԱՆՈՒՇ

(Վիպերգ Յովհ. Թումանեանի)

ԽՄԲԱԳՐԵՑ

ՍՈՒՐԷՆ ՇԱՄԼԵԱՆ

Տպագրութիւն «ԱԳԸՆ»
Յ. ԱԳԹԱՐԵԱՆ
ԻՍԹԱՆՊՈՒԼ
1948

ՁՕՆ

Գերդաստանիս, ծնողներուս եւ
վաղամեռիկ Յասմիկիս:

Ս. Տ.



ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ
(1869 — 1923)

Կայ Մեծարենց, կայ Տէրեան,— եւ բազում ուրիշ
պոետներ կան,
Բայց — Թումանեա՛նն է անհաս Արարատը մեր նոր
երգութեան: —

(Գիրք Ճանապարհի) **ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ**

ԾԱՆՕԹԱՑՈՒՄ

Յովհաննէս Թումանեանի *Անուշ* վիպերգը կը հանդիսանայ առաջին հայերէն օփերան, որ հեղինակին մահուան քսանըհինգամեակին առիթով ներկայացուեցաւ Փարիզի մէջ քանի մը շաբաթ առաջ:

Յիշատակի այդ ոգեկոչումին զուգադիպեցաւ նաեւ Իսթանպուլի մէջ ցուցադրութիւնը *Անուշ*ի ժապաւէնին:

Այդ կրկնակ առիթներուն կը պարտինք ներկայ հատորը, որ կը ձգտի ծանօթացնել ժողովրդային բանաստեղծ Յովհաննէս Թումանեանն եւ անոր *Անուշ*ը:

Յովհ. Թումանեանը ճանչցանք գիւղական դպրոցի գրասեղաններուն առջեւ, ամսագիր *Հասկեր*ու եւ *Լուսաբեր* մայրենի լեզուի դասագրքերու էջերէն:

Յովհ. Թումանեանը տեսանք 1922 Հոկտեմբերին, երբ Պաթումէն Իսթանպոլ ժամանեց ընկերակցութեամբ «Գործ» ամսագրի տնօրէն Երուանդ Թաշիանոսեանի:

Օրերէ ի վեր փոթորիկ կը տիրէր Սեւ Ծովուն մէջ եւ մտահոգութեան մատնուած էր Թումանեանի մեծագոյն հիացողը Պօղոս Մակինցեան: Վերջապէս նաւահանգիստ հասաւ շոգենաւը, ու երբ մեր նաւակը կը մօտենար անոր, հեռուէն ճանչցանք սպիտակամօրուս բարի ծերունին, որ

—Ողջ ենք էլի, Պօղոս ջան. ողջ ենք, կը պոռար կամրջակէն:

—Յաւիտեան ողջ լինիս վարպետ ջան, կը պատասխանէր վարէն Պօղոս Մակինցեան:

Կամրջակին վրայ Թումանեանի առաջին հարցումը եղաւ.

—Պօղոս ջան. ասա՛, զիս ճանաչո՞ւմ են էստեղ...

Պատասխանի փոխարէն, Մակինցեան գրպանէն հանեց «Ժողովուրդի Ձայն»ի այդ օրուան թիւը ուր հրատարակուած էր Թումանեանի նկարը:

Յայտնապէս յուզուած էր ժողովրդային բանաստեղծը եւ ուրախութեան արցունքներ կը նշմարուէին անոր խելացի աչքերուն մէջ: Աւելի յետոյ, երբ տեսաւ ժողովրդային յարգանքի արտայայտութիւնները, Թումանեան առաջին իսկ առիթէն օգտուեցաւ, հրապարակային բանախօսութեամբ, շնորհակալութիւն յայտնելով հանրութեան:

Իր կարճատեւ բնակութեան ընթացքին Թումանեան առիթը ունեցաւ տեսնելու թէ որքա՛ն լայն ժողովրդականութիւն շահած էր իր արուեստը եւ ամէն առիթով կը կրկնէր թէ հոգեկան անպատում գոհացում գտած էր իր ճամբորդութեան ընթացքին,

—Երբեք չէի կարող երեւակայել թէ Լոռեցի աննշան բանաստեղծիս կը ճանաչէին էստեղ, կ՚ըսէր Թումանեան եւ բացառիկ հաճոյք կը զգար, ամէն անգամ որ այցելուներ կ՚արտասանէին ամբողջ հատուածներ իր գործերէն:

Յովհ. Թումանեան, Իսթանպուլէն անցաւ արտասահման նիւթական օժանդակութիւն ապահովելու համար սովահար ժողովուրդին: Շնորհիւ իր վայելած լայն ժողովրդականութեան, Թումանեան կատարելապէս յաջողեցաւ իր առաքելութեան մէջ:

Հակառակ իր ալեւոր երեւոյթին, Յովհ. Թումանեան կը պահէր իր երիտասարդական կորովը, մտքի պայծառութիւնը, որոնց կը միանար գեղջուկի համեստունակ այլ ուշիմ պատրաստաբանութիւնը, դիւրահաղորդ եւ ազնուական:

Մամուլը արժանավայել յարգանքի տուրքը ընծայեց ժողովուրդին այդ համեստ զաւկին, որ անձամբ այցելեց մեր խմբագրատուները, հաճոյքով բազմեցաւ կոտրած աթոռներուն վրայ՝ ըսելով՝

—Մի նեղուիք տղերք, մենք էլ կոտրած, աթոռի վրայ ենք աշխատում...:

Դարերու տարողութեամբ դէպքեր զահավիժեցին անցնող քանըվեց տարիներու ընթացքին, ազգեր մեռան ու երկիրներ կործանեցան, բայց անսասան մնաց արուեստն ու յիշատակը ժողովրդային մեծ բանաստեղծին:

Կարծես նախազգալով իր մօտալուտ վախճանը, Յովհ. Թումանեան 1921ին, ի զուր վախ կը յայտնէր թէ պիտի չկարենար ճակատաբաց ներկայանալ Անոր, որ զինքը «պօէտ» սահմանած էր, տալով հող ու ծաղիկ:

Ահաւասիկ Թումանեանի այդ քառեակը, որ ընդհակառակն լաւագոյնս կերպով կը պանծացնէ բանաստեղծին յաւերժական գործը, միեւնոյն ատեն հաստատելով թէ մեծ քերթողը լիովին կատարած է իր պարտքը.

Կեանքս արի հրապարակ, ոտքի կոխան ամէնքի,
Խափան, խոպան ու անպտուղ, անցաւ առանց արդիւնքի:
Ի՛նչքան ծաղիկ պիտի բուսնէր, որ չբուսաւ էս հողին..,
Ի՛նչ պատասխան պիտի տամ ես հող ու ծաղիկ տըւողին...

Ս. Շ.

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

(ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ)

Յովհաննէս Թումանեան հայ գրականութեան մեծագոյն դէմքերէն մէկն է։ Ծնած է Լոռիի Դսեղ գիւղը, 1869ին։ Քահանայի զաւակ. Թումանեան կարդալ-գրել սորված է հայրիկէն, յետոյ գացած է Թիֆլիս, ուսումը շարունակելու համար տեղւոյն Ներսէսեան դպրոցին մէջ։ Երեք տարի յաճախելէ յետոյ հեռացած է վարժարանէն և 16—17 տարեկան, մտած է Թիֆլիսի առաջնորդարանը իբրեւ քարտուղար։ Ասիկա եղած է իր առաջին ու վերջին պաշտօնը, որովհետեւ այդ թուականէն սկսեալ կը նուիրուի գրականութեան։

Յովհ. Թումանեան սկսած է քերթուածներ գրել 10—11 տարեկանին։ 1892ին առաջին անգամ ըլլալով լոյս կ'ընծայէ երկու փոքրիկ տետրակներ։ Այդ հատորներէն մէկուն մէջ հրատարակուած էր Շունն ու Կատուն շատ ծանօթ քերթուածը, որ ատենին մերժուած էր Մուրճի խմբագիր Ա. Արասխանեանի կողմէ։

Ողբացեալ Ղազարոս Աղայեանի նման, Յովհ. Թումանեան հանդիսացաւ մէկը մեր լաւագոյն մանկական գրականութեան վարպետներէն, եւ յաջողեցաւ բացառիկ ճարտարութեամբ և բարձր արուեստով վերակենդանացնել ժողովրդական բանահիւսութիւնը, առանց եղծելու անոր էական յատկանիշները։ Յովհ. Թումանեան նոյնքան յաջողութիւն ձեռք բերաւ նաեւ իբր առակախօս և հէքեաթներու պատմիչ՝ շնորհիւ իր սահուն եւ ներդաշնակ լեզուին։

Արեւելահայ գրականութեան մէջ բեղմնաւոր տեղ մը գրաւեց Թումանեանի քնարը, յաւերժացնելով նահապետական կեանքի կենդանի հերոսներն ու անոնց կենցաղը։

Յովհ. Թումանեան գրական ասպարէզ իջած էր այն շրջանին երբ հայ նահապետական կեանքը մօտեցած էր իր վախճանին՝ տեղ տալով դրամատիրական հասարակարգին։ Հակառակ ասոր, Յովհ. Թումանեան իր հոգեբանութեամբ եւ մտապատկերներով կը պատկանի նահապետական շրջանին։ Այդ պատճառով է որ Թիֆլիսի նման մեծ քաղաքներու կեանքը՝ չէ յաջողած խաթարել բանաստեղծին խառնուածքը կամ խորթ զգացումներ պատուաստել անոր։ Ընդհակառակն, հաւատարիմ մնալով իր տեսլականացած աշխարհին, Թումանեան աւելի ուժգնօրէն համակուած է ծննդավայրի կարօտով։

Քաղաքը ստեղծագործութեան ներշնչարան չէ եղած բանաստեղծին համար, որ հաւասար անտարբերութիւն ցոյց տուած է հանդէպ տիրող դրամատիրական դասակարգին եւ նորազարթ բանուորական տարրին։

Պէտք չէ հետեւցնել սակայն թէ Թումանեան չէ նկատած այն քանդիչ ազդեցութիւնը, որ քաղաքի կեանքը կը գործէր գիւղական կոյս միջավայրին վրայ։ Բանաստեղծը տեսած է վտանգը եւ այդ տխուր պատկերը նկարագրած է հարազատ գոյներով, իր ստեղծագործութեան առարկայ դարձնելով աշխատանքն ու չարքաշ հողագործը։

Թումանեանի քերթուածներուն, վէպերուն, հէքեաթներուն, դիւցազներգութիւններուն թէ վիպերգերուն մէջ ամէնէն աւելի հարազատութեամբ կը պատկերանայ բանաստեղծին ծննդավայրը, Լոռին, իր ուրոյն կենցաղով, նուիրականացած դարաւոր աւանդութիւններով եւ նահապետական կենցաղի կուսութեամբ, որոնք նոյնութեամբ կը ցոլան Թումանեանի հոգիին մէջ, իրենց վեհ ու խորհրդաւոր, դաժանի եւ դիւթական ուժերով։

Անկախաբար քնարերգական բարձր արուեստէն, Թումանեանի տաղանդին զօրաւոր յենարաններէն մէկը կը հանդիսանան անոր զրոյցներն ու հէքեաթները, ուր հրապուրիչ պարզութեամբ կը պատկերանայ նահապետական ժողովուրդի ոգին։

Եթէ Թումանեանի վիպերգերն ու քերթուածները մեծ մասամբ նուիրուած են Լոռիին, անդին դիւցազներգութիւններն ու հէքեաթները կ'ընդգրկեն բովանդակ նահապետական ժողովուրդին հոգեկան աշխարհն ու իմացականութիւնը։

Այդ մարզին մէջ Յովհ. Թումանեան իր գեղարուեստական փառապսակին ծաղիկները քաղած է ժողովրդական բանահիւսութեան պարտէզէն, որուն թարմաշունչ գոյներն ու բուրմունքը կը յիշեցնեն բուն ժողովուրդը։ Առաւելապէս այդ է պատճառը, որ Թումանեանի այլազան գրական գործերը կը կազմեն համագումարը այն գործերուն, որոնք ժողովուրդին հոգեկան թանգարանէն լոյս աշխարհ հանած է բանաստեղծին տաղանդը. պէտք չէ զարմանալ ուրեմն, երբ Յովհ. Թումանեանի գործերը լայն ընդունելութիւն գտած են ամէն կողմ, որովհետեւ անոնք կը դաստիարակեն նոր սերունդը և կը սորվեցնեն մայրենի լեզուն որ սահունութեան եւ ներդաշնակութեան լաւագոյն աստիճանի հասած էր բանաստեղծին գրչին տակ։

Համեստ գիւղացիի զաւակ, Թումանեան մեծ համակրութիւն կը սնուցանէ հանդէպ հասարակ ժողովուրդին և կը ջատագովէ հաւասարութիւնը, երբ իր հերոսներէն խեղճ թռչունի մը, կկուին բերնով կը պոռայ գիշատիչ ագռաւին երեսն ի վեր.—«Սարն ամենքիս է հաւասար»։ Մինչդեռ ագռաւը ինքզինքը տէր-տիրական հռչակեր էր անտառին և ամէն օր մէկիկ մէկիկ կը յափշտակէր ու կ'ուտէր կկուին ձագուկները։

Բանաստեղծը վեհոգի արուեստագէտի նոյն վերաբերումը ցոյց տուած է անխտիր հանդէպ բոլոր տկարներուն, անպաշտպաններուն, տառապեալներուն, մէկ խօսքով անոնց ժողովուրդին, բաժնելով անոր դառնութիւններն ու ցաւերը։

Թումանեանի գլխաւոր արժանիքներէն մէկը կը հանդիսանայ նաեւ նուրբ ու ազնուական հեգնանքը, որ առաւելապէս երեւան կուգայ Շունն ու Կատուն եւ Քաջ Նազարի մէջ։

Ժողովրդական բանահիւսութեան տեսակէտով մեծ արժէք կը ներկայացնէ մանաւանդ Սասունցի Դաւիթը, որուն հազարամեակը տօնուեցաւ մեծ հանդիսութեամբ։ Իբրեւ հայ վիպերգութեան մեծագոյն վարպետը, Յովհ. Թումանեան յաջողած է կատարեալ հարազատութեամբ վերակենդանացնել դարերու ընթացքին կերտուած հերոսներու եւ միջավայրին կենդանի պատկերը։

Թումանեանի բեղուն գրիչը արտադրած է նաեւ բազմաթիւ ուրիշ արժէքաւոր գործեր։ Իր վէպերէն յիշատակութեան արժանի են Լոռեցի Սաքօն, Աղթամարը, Անիծած Հարսը, Պօղոս-Պետրոսը, Լուսաւորչի Կանթեղը, իսկ դիւցազներգութիւններէն — անկախաբար Սասունցի Դաւիթէն — Փարւանան եւ Թմբկաբերդի Առումը։

Այս դիւցազներգութիւններուն մէջ ամենէն աւելի մեծ ընդունելութեան արժանացած է Թմբկաբերդի Առումը։ Ողբացեալ երգահան Սպենդիարեան Թմբկաբերդի Առումէն օգտուելով պատրաստած է Ալմաստ օփերան, որուն մասին գնահատանքով կ'արտայայտուին օտարներն անգամ։

Յովհ. Թումանեան, բացի ինքնագիր գործերէն, տուած է նաեւ շատ յաջող թարգմանութիւններ Լերմոնտովէն, Փուշկինէն, Կէօթէէն, Ֆիրտուսիէն, Լոնկֆէլլոյէն, Շիլլէրէն, Պայրընէն եւայլն։

Թումանեանի երկերը լոյս տեսած են չորս անգամ։ 1892ին Մոսկուայի մէջ, մօտաւորապէս 300 էջ։ Երկրորդ անգամ 1903ին Թիֆլիս, երրորդ անգամ 1908ին եւ չորրորդ անգամ Իսթանպուլ 1922ին։ Թումանեան անձամբ պատրաստած է այս վերջին հաւաքածոն 1921ին, յառաւելով նախապէս հրատարակուած քերթուածներէն ոմանք, իր իսկ բառերով «իբր իր հոգիին անհարազատ արտայայտութիւններ», և միւսներուն վրայ կատարած է սրբագրութիւններ, կրճատումներ ու փոփոխութիւններ։

Ժողովրդական բանաստեղծը մասնակցած է նաև Հասկեր մանկական ամսագրին (1908—1910), զոր կը խմբագրէր մանկավարժ Լիսիցեան. ինչպէս նաև Լուսաբեր Մայրենի Լեզուի դասագիրքերուն։ Սիրուած անխտիր ժողովրդային բոլոր դասակարգերէն, Թումանեան իր մասնակցութիւնը բերած է գրեթէ հանրային ամէն ձեռնարկներու, համաշխարհային առաջին պատերազմէն առաջ ու յետոյ։

1919ին մեծահանդէս տօնուեցաւ իր ծննդեան յիսնամեակը և չորս տարի յետոյ, 2 Ապրիլ 1923ին, Յովհ. Թումանեան մեռաւ Մոսկուայի մէջ եւ աճիւնը փոխադրուեցաւ Երեւան։

“ԱՆՈՒՇ”Ը

Յովհ. Թումանեանի գործերուն մէջ բացառիկ տեղ կը գրաւեն ժողովրդական կեանքէ քաղուած երկու «պօէմա»ներ Անուշը եւ Մարօն, որոնց կը յաջորդէ Դէպի Անհունը խորագրով հոգեբանական փիլերգը։ Մասնաւորաբար Անուշին մէջ երեւան կու գայ Թումանեանի ստեղծագործ տաղանդը իր բովանդակ տարողութեամբ եւ բազմազան երանգներով։

Թումանեան իր հոգին դրած է այդ գործին մէջ, եւ յաջողած է կենդանացնել նահապետական անհետացող բարքերը, սովորութիւններն ու հերոսները։ Անուշը կը հանդիսանայ յաւերժական յուշարձանը անմահ անցեալին, որուն կնքուած է բանաստեղծը անհուն կարօտով։

Զուր տեղը չէ որ ըսուած է թէ ոչ մէկ գործ կրնայ մրցիլ Անուշի վայելած ժողովրդականութեան հետ։ Վէպին հերոսներէն Մարօ կը խախտէ պայմանական աւանդութիւնները, պատճառ հանդիսանալով եղերական ողբերգութեան մը, որուն զոհ կը դառնան նոյնինքն Սարօն եւ Անուշը։ Երեւութապէս այս աննշան պատահարն է որ յանկարծ հսկայական զարգացումներ կ'արձանագրէ՝ շօշափելով ընկերային հարցեր, որոնց քով կը նսեմանան այլեւս Մօսիի ճակատագրապաշտ վրէժխնդրութիւնը, Անուշի գուշակութիւններուն իրականացումը եւ յարակից մանրամասնութիւնները։

Յովհ. Թումանեան յաջողած է կենդանացնել ժողովրդային բովանդակ կենցաղը, ստեղծելով տիպար նկարագիրներ, որոնց շնորհիւ հարազատ բնոյթ կը ստանայ վիպերգութիւնը արուեստի կատարելութեան առաջնորդելով զայն։

Յաջորդ էջերուն մէջ ընթերցողը պիտի գտնէ ամբողջական պատճէնը Թումանեանի այդ գլուխ-գործոցին, որ առիթը պիտի ունենայ նաեւ տեսնելու շարժանկարի պաստառին վրայ։

Անուշը դաշնաւորած է երգահան Տիգրանեան եւ առաջին անգամ բեմադրուած է 1921ին Աղեքսանդրապոլի մէջ։ Տիգրանեանի դաշնաւորումը չափազանց տկա՛ր էր մասնաւորաբար նուագախումբի մասնակցութեան տեսակէտով։ Անուշ օփէրան նախնականութենէ ազատելու նպատակով աւելի յետոյ վերամշակուեցաւ Պետ. Օփերայի բեմադրութեան համար, բայց ձեռք բերուած արդիւնքը տակաւին վերջնական չէ, բաղդատելով Թումանեանի վիպերգութեան գեղարուեստական մակարդակին։

Վերջին անգամ Փարիզի մէջ բեմադրուեցաւ Արայ Պարթեւեանի դաշնաւորած Անուշը, առանց ակնկալուած գոհացուցիչ արդիւնքը ձեռք բերելու։ Կասկած չկայ թէ յաջորդական այս փորձերէն յետոյ, մօտիկ ապագային նոր տաղանդներ պիտի յաջողին Թումանեանի արուեստին արժանի երաժշտական բարձրութեան հասցնել հայերէն առաջին օփերան։

Տարաբախտ Կոմիտաս Վարդապետ եւս փորձած էր օփերայի վերածել Անուշը, բայց դժբախտաբար անաւարտ մնացած է այդ աշխատանքը, որ ապահովաբար լաւագոյնը պիտի ըլլար։

Ինչ կը վերաբերի Ամերիկայի մէջ ժապաւէնի վերածուած Անուշին, կը հաւաստուի թէ ընդհանուր առումով յաջող ժապաւէն մըն է եւ դերակատարները իրենց կարելին չեն խնայած՝ լաւ գործ մը երեւան բերելու համար։ Մասնաւորաբար յաջող են մեներգները եւ նկարները, ինչ որ գրաւական մըն է ժապաւէնին յաջողութեան։

Անուշը Իսթանպուլի մէջ երեք առիթներով բեմադրուած է եւ անոր նիւթն ու եղանակները ծանօթ են իսթանպուլահայութեան։ Անուշը առաջին անգամ բեմադրուած է 1914ին, Սկիւտարի Աղջկանց Գօլէժի ուսանողուհիներուն կողմէ (2 անգամ) ի նպաստ ուսուցիչ Զաւարեանի ֆօնտին։ Այդ ներկայացման երգերու բաժինը դաշնաւորած էր Կոմիտաս Վարդապետի աւագ սաներէն Գ. Վարդան Սարգսեան, իսկ բեմադրիչն էր Աշոտ Մատաթեան։

Երկրորդ անգամ Անուշը բեմադրուեցաւ 1919ին Թէփէպաշըի սրահին մէջ՝ ղեկավարութեամբ Փարիզի համբաւաւոր «Սալօն Րուժ» նուագախումբին երկրորդ վարիչ Գէորգ Եաղուպեանի։ Այդ ներկայացման ընթացքին Անուշը մարմնաւորած էր ծանօթ երգչուհի Հայկանոյշ Թորոսեան։

Յիշողութիւններու մէջ խոր հետք թողած է սակայն Անուշի երրորդ բեմադրութիւնը, որ կատարուեցաւ 1919ին Սուրաբեան Թատերախումբին կողմէ Պէյօղլուի «Օրիանթալ» (այժմ Սինէ Իփէք) թատրոնը՝ Տիգրանեանի եղանակներով եւ մասամբ Օփէրայի ձեւով։ Յետագային, երբ ներկայացումը կրկնուեցաւ Անուշի անմահ հեղինակը, Յովհ. Թումանեան, բեմ բարձրացաւ ժողովուրդին սրտընդոստ ծափերուն մէջ՝ յուզուած բառերով իր շնորհակալութիւնը յայտնելու համար։ Յովհ. Թումանեան առանձին առանձին շնորհաւորեց նաեւ դերակատարները, ինչպէս բեմավարը Աշոտ Մատաթեանը, որուն կատարած կենդանի պատկերի մը յաւելումը արժանացած էր ծերունազարդ բանաստեղծին գնահատանքին։

Աւելցնենք թէ, Աշոտ Մատաթեան մտադրած էր Թուրքերէնով ներկայացնել Անուշը եւ ամբողջովին թարգմանած էր զայն «Գիւղացիի Սէր» (Քէօյլիւ Աշգը) անունով։ Հայերէն ներկայացումներու արտօնութիւնը եկաւ յետաձգել սակայն այդ ներկայացումը։

* * *

Ա Ն Ո Ւ Շ

(ԱՄԻՈՂՁԱԿԱՆ ԳԱՄՃԷՆ)

ԱՆՈՒՇ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

(ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԳԻՇԵՐԸ)

Բացւած լուսնի նուրբ շողերին,
Հովի թևին՝ թըռչելով՝
Փերիները սարի գլխին
Հաւաքւեցին գիշերով։

—«Եկե՛ք, քույրե՛ր, սեգ սարերի
Չըքնաղագեղ ոգիներ,
Եկե՛ք, ջահել սիրահարի
Սերը ողբանք վաղամեռ։

Օխտն աղբիւրից ջուր է առել
Կոյս սափորով, լուռ ու մունջ,
Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,
Կապել սիրոյ ծաղկեփունջ։

Ջուրն ու ծաղիկ աստղունք գրել.
Խնդիրք արել աստղերին.
Փափաք սըրտով խնդիրք արել՝
Բարի ժըպտան իր սերին...

Ափսո՛ս, Անո՛ւշ, սարի ծաղիկ,
Ափսո՛ս իգիթ քու յարին,
Ափսո՛ս բոյիդ թելիկ-մելիկ,
Ափսո՛ս էդ ծով աչքերին...»

Ու նրանց հետ՝ ցող-արցունքով
Լըցուած սըրտերն ու աչեր՝
Սարի ծաղկունք տըխուր սիւքով
Հառաչեցին էն գիշեր:

«Վուշ-վո՛ւշ, Անուշ, վուշ-վո՛ւշ, քուրի՛կ
Վո՛ւշ քո սերին, քու եարին...
Վուշ վո՛ւշ, Սարօ՛, վուշ-վուշ, իգի՛թ,
Վո՛ւշ քու սիրած սարերին...»

—Եկէ՛ք, քոյրե՛ր, սեգ սարերի
Զըքնաղագեղ ոգիներ...»
Ու փերիներն էսպես տըխուր
Երգում էին ողջ գիշեր:

Կանչում էին հըրաշալի
Հընչիւններով դիւթական
Ու հենց շողաց ցոլքն արեւի՝
Անտես, անհետ չըքացան:

Խոր սուզւեցին ակն աղբիւրի,
Մըտան կաղնին հաստաբուն,
Ու շեռնայրին վըտակների
Ալիքները պաղպաջուն:

ԱՌԱՋԻՆ ԵՐԳ

Ա.

Կանչում է կըրկին, կանչում անդադար
Էն չըքնաղ երկրի կարօտը անքուն,
Ու թեւերն ահեղ փըռած տիրաբար՝
Թըռչում է հոգիս, թըռչում դէպի տուն:

Ուր որ հայրենի օջախի առաջ
Վաղո՛ւց կարօտով ըսպասում են ինձ,
Ու ձըմռան երկար գիշերը նըստած
Խօսում են Լօռու հին-հին քաջերից:

Դէպ են սարերը, որ վէս, վիթխարի,
Հարբած շարքերով բըռնած շուրջպարի,
Հըսկա՛յ շուրջպարի բըռնած երկընքում,
Հըրճւում են, պես էն մեծ հարսանքում.
Պերճ Արագածի նազելի դըստեր,
Որ Դեւ-Ալ, Դեւ-Բէթ եւ այլ հըսկաներ,
Խօլ-խօլ հըսկաներ հընոց աշխարհի,
Փախցըրին բերին անտառիկ Լօռի:

Բ.

Է՜յ հին ծանօթներ, է՜յ կանանչ սարեր,
Ահա ձեզ տեսայ ու միտըս ընկան,
Առաջըս եկան երջանիկ օրեր,
Սիրելի դէմքեր, որ հիմա չըկան:
Անցել են, ոնց որ ծաղկունքը պէս-պէս,
Որ անցած գարնան կային ձեր լանջում,
Անցե՜լ ձեր գըլխի հէրուան ձիւնի պէս,
Բայց եկել եմ ես՝ նըրանց եմ կանչում:
Ողջո՜յն ձեզ, կեանքիս անդրանիկ յուշեր,
Ողբացած հոգիս ողջունում է ձեզ,
Թըռչուն կարօտով փընտռում ձոր ու լեռ
Դիւթական ձայնով կանչում է հանդէս:
Դո՛ւրս եկէք կըրկին շիրմից, խաւարից,
Դուրս եկէք տեսնել, շօշափել, լըսել,
Կեանքով շընչեցէ՛ք, ապրեցէ՛ք նորից,
Լըցրէք պօէտի հաճոյքը վըսեմ...

Գ.

Եւ մութ այրերից մամռոտ ժայռերի,
Թաւուտ ծըմակի լըռին խորշերից
Մանուկ հասակիս հընչուն ծիծաղի
Արձագանգն ահա լսում եմ նորից:
Թընդում է զըւարթ աղմուկը բինի՝
Բարձրանում է ծուխն իմ ծանօթ ուրթից,
Ու բոլորն, ահա, նորից կենդանի
Ելնում են աշխոյժ վաղորդեան մութից,
Ու թա՛րմ, ցօղապատ լեռների լանջում...
Սո՛ւս ... ականջ արա,—հովիւն է կանչում...

Դ.

—Աղջի՛, անաստւած, նըստի՛ր վըրանում,
Ի՞նչ ես դուրս գալիս, խելքամաղ անում,
Աշուղ ես շինել, չեմ հանգըստանում,
Խաղեր կապելով,
Չօլեր չափելով,
Ոչխարըս անտէր,
Ընկել եմ հանդեր:

Ամա՛ն, էրեցիր սիրտըս քո սիրով,
Ոտըս կապեցիր թել-թել մազերով.
Էլ չեմ դիմանայ, կը փախցնեմ զոռով,
Ա՛յ սարի աղջիկ,
Ա՛յ սիրուն աղջիկ,
Ա՛յ դու կարմրաթուշ.
Թուխամազ Անուշ:
Քու հէրն ու մէրը թէ որ ինձ չըտան
Արիւն կը թափեմ ես գետի նըման.
Սարերը կ'ընկնեն կորչին անդիւման-

Ա՛յ սեւ աչքերով.
Ա՛յ ծով աչքերով,
Ունքերըդ կամար
Աղջի քեզ համար:

Է.

Երգում է Սարօն, ու չի կարենում
Աղջիկը հանգիստ նըստի վըրանո՛ւմ:
—Էն ո՞վ էր, նանի՛, որ կանչում էր մեզ,
Դու չե՞ս իմանում… ականջ դի՛ր, տե՛ս…
—Հերիք է, Անուշ, ներս ա՛րի դագեն,
Քանի՛ դուրս թըռչիս, նայիս դես ու դեն,
Տեսնողն էլ կ՚ասի—ի՞նչ աղջիկ է սա…
Հազար մարդի մօտ կ՚երթայ կը խօսայ:
—Մըտի՛կ տուր, նանի՛, են սարի լանջին,
Ինչքան աղուկ է տալիս կանանչին…
Նանի՛, թող գընամ քաղեմ ու հիւսեմ,
Էն սարի լանջէն «ջան գիւլում» ասեմ:
—Հանգիստ կաց, Անո՛ւշ, դու հասած աղջիկ,
Ի՞նչ ունիս ջահել չոբանների մօտ,
Նըստիր վըրանում, քու գործին մըտիկ.
Պարկեշտ կաց, աղջի՛, ամօթ է, ամօ՛թ:
—Ա՛խ, սիրտըս, նանի՛, չը գիտեմ ինչի
Մին լաց է լինում սեւակնա՛ծ, տըխո՛ւր.
Մին թեւ է առնում, ուզում է թըռչի.
Չըգիտեմ՝ թէ ո՛ւր, չըգիտեմ թէ ուր…
Նա՛նի ջան, նանի՛, ես ինչպէ՞ս անեմ,
Ի՞նչ անի անքուն, անհանգիստ բալեդ
Նանի՛ ջան, նանի՛, կուժը թող առնեմ.
Աղբիւրը գընամ աղջիկների հետ…,

Զ.

Կըժերն ուսած՝ թըւըռալով
Ջուրն են իջնում աղջիկներ,
Խընդում իրար ուսի տալով,
Երգը զընգում սարն ի վեր:
—Ամպի տակից ջուր է գալի
Դօշ է տալի, փըրփըրում
Էն ո՞ւմ եարն է նըստած լալի
Հօնգուր·հօնգուր էն սարում:
Ա՛յ պաղ ջըրեր, զուլալ ջըրեր,
Որ գալիս էք սարերից,
Գալիս՝ անցնում հանդ ու չօլեր,
Եարս էլ խըմե՞ց էդ ջըրից:
Եարաբ խըմե՞ց՝ եարաբ հովցա՞ւ
Վառուած սիրտը էն եարի.
Եարաբ հովցա՞ւ, եարաբ անցա՞ւ
Անքուն ցաւը ջիգեարի...
—Աղջի՛, քու եարն եկաւ անցաւ
Վառուած, տարուած քու սիրով.
Էրւած ջիգեարն՝ եկաւ անցաւ,
Չը հովացաւ պաղ ջըրով . . .
Ամպի տակից ջուր է գալի,
Դօշ է տալի, փըրփըրում,
Ա՛խ իմ ազիզ եարն է լալի
Հօնգուր-հօնգուր էն սարում:

Է.

Ու պառաւ նանի սըրտի մէջ յանկարծ
Զէն 'տըւաւ թաքուն մի խաւար կասկած.
—Էն ե՛րբ էր Անուշն իր կուժը առաւ,
Աղբիւրը գընաց ու ետ չը դառաւ , , .

Ամպերն եկել են սարերը պատել,
Ջրերը լցուել. խաւար փրփրաբւել,
Հազար չար ու շառ, հազար հարամի
Հազար ջանհիլներ վրխտում են հիմի . . . »
Ու ելաւ տեղից պառաւը յանկարծ.
—Ո՞ւր կորար, Անո՛ւշ, ա՛յ մազըդ կտրած...
Ու ձորի գլխին, ձեռքը ճակատին
Կանչում է, կանչում անահ զաւակին:
—Աղջի՜, սեւասիրտ, քու ահը կտրի,
Աղջիկը մենակ ձո՞րը կը մտնի:
Ամպը կոխել է, աշխարհքը մթնել,
Ի՞նչ ես կորցրել, չես կարում գտնել...
Աղջի, հէ՜յ Անուշ. ա՛յ աղջի՜, Անուշ »
Ծնկանը զարկում, հառաչում է «վո՜ւշ»,
Ու ձորի գլխին մոլորուած կանգնած
Նայում է ներքեւ սիրտը սեւակնած:
Ամպերն եկել են սարերը պատել,
Ջրերը լցուել, խաւար փարփարւել.
Հազար չար ու շառ, հազար հարամի
Հազար ջանհիլներ վրխտում են հիմի:
—Թո՛ղ, կանչում են ինձ... մերըս կ'իմանայ...»
—Չէ՛, Անուշ, քի՛չ էլ. մի՛ քիչ էլ մնաս.. »
—Չէ՛, թող ես գնամ... ա՜խ, ի՞նչ խենթ եմ ես...
Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պէս,
Հէնց ես եմ մենակ լալիս ու տանջւում,
Դու սարի լանջին խաղեր ես կանչում.,.
Վաղո՜ւց, վաղուց ես դու ինձ մոռացել...
Ես ե՛րբ եմ եկել էստեղ քարացել
Ու մնում եմ քեզ, մնո՜ւմ, անիրա՛ւ,
Էնքան մնացի՝ աչքըս ջուր դառաւ
Ինձ չես լսում,
Չես ափսոսում,
Էլ չես ասում

Ինչ կըլնեին ես..,
Ես կը վառւիմ
Հուր կը դառնամ.
Ես կը հալւիմ,
Ջուր կը դառնամ,
Ես չը գիտեմ
Ինչ կը դառնամ,
Թէ որ մինն էլ
Էսպես մընամ...
Ասում են՝ ուռին
Աղջիկ էր ինձ պես,
Մընում էր եարին,
Ու չեկաւ նա տես:
Խեղճը դողալով
Անյոյս կըռացաւ,
Դարդից չորացաւ,
Ուռենի դարձաւ:
Ջրերի վըրա
Գըլուխը կախած
Դեռ դողում է նա
Ու լալիս կամաց,
Ու ամբողջ տարին
Մի միտք է անում,
Թե եարը եարին
Ոնց է մոռանում...
—Ա՜խ, Անո՜ւշ, Անո՜ւշ, էդ ի՞նչ ես ասում.
Բա դու չե՞ս լըսում,
Էն, որ լանջերին խաղեր են ասում,
Ո՞ւմ հետ են խօսում...
Էն, որ գիշերով շըխու են փըչում,
Էն ո՞ւմ են կանչում...
Էն, որ մոլորւած նըստած են մընում,
Ո՞ւմ հետ են լինում...
Էն, որ հառաչում ու ախ են քաշում,
Էն ո՞ւմ են յիշում...

Ա՛խ, Անո՛ւշ, Անո՛ւշ, անաստուա՛ծ Անուշ...,
Արբեցած, անո՛ւժ
Հառաչեց հովին ու սրտին ընկաւ,
Հալուեցաւ, հանգաւ...

Բ.

—Անուշ, այ աղջի, Անո՛ւշ, տո՛ւն արի...»
Կանչում է մէրը, հառաչում կանչում:
—Գալիս եմ. գալիս, գալիս եմ, նանի՛...»
Ձորից աղջկայ ձենն է ղօղանջում:
Ու մազերն անկարգ տըւած թիկունքով
Ու ցրւած շիկնած այտերի վըրան,
Դուրս եկաւ թեթեւ ամպերի տակից
Անուշը՝ փախած եղնիկի նըման,
Նա կուժը դատարկ ետ բերաւ կըրկին,
Իսկ ուսին տարած ուսաշոր չըկայ,
Թողել է էն էլ ջըրի եզերքին...
Ա՛խ, անհոգութիւն ջահել աղջըկայ...
—Նանի՛, վախեցի, գանգատում է նա,
Եւ ուզում է լալ, չի կարողանում.
—Նանի՛, վախեցի՛, գանգատւում է նա,
Եւ ուզում է լալ, չի կարողանում.
—Նանի՛, ներքեւում ես մարդիկ տեսայ,
Կարծեցի՝ քուրտեր էին լողանում»:
Անիծում է ծեր մէրը բարկացած
Իրեն մոռացկոտ, վախկոտ Անուշին,
Ու անէծք տալով իջնում է նա ցած՝
Դատարկ ետ բերած հին կուժը ուսին:

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԳ

Ժ.

(ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԱՌԱՒՕՏԸ)

Համբարձումն եկաւ, ծաղկունքը ալւան
Զուգել են հանդեր նախշած գորգերով:
Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան
Վիճակ հանելու աշխոյժ երգերով:

«Համբարձում, եայլա՛,
Եայլա՛ ջան, եայլա.
Մեր սարեր, եայլա,
Եայլա ջան, եայլա:

Երգ ու քոյր խառնած
Թեւ թեւի բռնած
Զուգում են լեռներ,
Ծաղիկ են քաղում,
Ծաղկի հետ խաղում
Ինչպէս թիթեռներ:

Համբարձում, եայլա՛,
Եայլա՛ ջան, եայլա՛
Լաւ օրեր, եայլա՛
Եայլա ջան, եայլա:

Եկաւ Համբարձում
Ծաղկով զարդարուած
Մեր բախտին հարցնում.
—Ո՞վ է մեզ գրուած:

—Ա՛յ ջան տղայ, չոբան տղայ, ո՞ւմն ես դու:
—Աստուած գիտի, աշխարհ գիտի՝ իմն ես դու:

Դէ հանիր, աղջի
Վիճակն ի բարին,
Երգերով գովենք
Էն իգիթ եարին:

Բեղը ծիլ-ծիլ բոյը թիլ-թիլ են եարի
Ի՛նչ դարդ ունեմ քանի նա կայ աշխարհի
Համբարձում, եայլա.
Եայլա ջան, եայլա,
Հուր սրտեր, եայլա,
Եայլա՛ ջան, եայլա:
Թընդում են երգեր, խընդում են սըրտեր,
Ու շուրջ բոլորած վիճակ են հանում.
Ելնում է մեկին իր եարն ու սեր,
Մխաքի մուրազը սըրտումն է մընում:

ԺԱ.

Պըտոյտ է տալի վիճակը ձեռից
Քուշուշքը գըլխին ծաղիկ ծաղկաներ,
Թընդում «ջան գիւլում» մատաղ սըրտերից,
Հետը գըւգըւում են ծաղկոտ սարեր:

«Այ թուխ մազաւոր աղջիկ,
Ա՛յ սարի սովոր աղջիկ
Ջիգեարին գիւլլա դիպչի
Ով որ քեզ սիրի աղջիկ:

—Ո՞հ, ինչ սեւ վիճակ քեզ բաժին ընկաւ,
Սեւաբախտ քուրիկ, նազելի Անուշ.
Քու ձեռը կոտրի, ով որ հանեցիր...
Ու ողջ մընացին մոլորւած, ապուշ:

—Սուտ բան է, քուրիկ, դու մի՛ հաւատար,
Լոկ պատահական մի չար խօսք է սա.
Սիրտըդ մի՛ կոտրի սուտ բանի համար,
Քու խաղըդ խաղա՛, ջան գիւլում ասա:

—Ա՛խ, չէ՛, ես գիտեմ, որ ես բախտ չունեմ,
Ես երբէք երբէք, բախտ չեմ ունեցել...

Ես միշտ էլ էսպես անբախտ կըլինեմ.
Մանուկ օրից են դեռ ինձ անիծել...
Ասում են՝ մի օր, ես օրօրոցում,
Մի պառաւ դարւիշ մեր դուռն է գալի
Իր խաղն է ասում ու բաժին ուզում,
Իմ նանը նրան բաժին չի տալի:
—Կորի՛, ասում է, կորի՛ մեր դռնից,
Երեխաս ճաքեց, հեռացիր. գնա՛..,»
Ու դարւիշն էնտեղ անիծում է ինձ,
Թէ՝ դրա օրը լացով անց կենայ...
Ախ էն դարւիշի անէծքին անգութ
Ու էս վիճակին տեղեակ է Աստուած.
Սիրտըս էլ միշտ փա՛կ, սիրտըս էլ միշտ մութ
Ի՛նչ կայ չըգիտեմ, իմ առջեւ պահուած ..

—Մի՛ տըրտմիր, Անուշ մի՛ լինիր յամառ,
Մեր ձեռքով հանած մի անմիտ վիճակ,
Մի խելառ դարւիշ, մի անէծք յիմար,
Ու լալիս ես դու էդպէս սըրտաճաք...
Հանգի՛ստ կաց, քուրի՛կ, մի՛ վախիր էդքան
Կեանքը քեզ համար վառ գարուն է դեռ.
Էդ քո նորահաս մատաղ կուսութեան
Առաջեւ դեռ կան երջանիկ օրեր:
Սուտ բան է, քուրի՛կ, դու մի՛ հաւատար
Լոկ պատահական մի չար խօսք է սա
Սիրտըդ մի՛ կոտրի սուտ բանի համար,
Քու խաղըդ խաղա, ջան գիւղում ասա:

(Խումբը երգում է)

Աղջի, բախտաւո՛ր
Երնե՛կ քու սէրին
Քու սարի սովոր
Սեւ-սեւ աչերին:

Համբարձում, եայլա՛,
Եայլա ջան, եայլա՛,
Սեր օրեր, եայլա՛,
Եայլա՛ ջան, եայլա՛:

Մեռնիմ գարունքիդ,
Ծաղկած գարուն ես,
Սարի պես մեջքիդ
Կանգնած եար ունիս:

Համբարձում, եայլա՛,
Եայլա՛ ջան, եայլա՛,
Սար-եարեր, եայլա՛
Եայլա՛ ջան, եայլա՛:

(Անուշը մենակ)

Ա՛խ, իմ բախտը կանչում է ինձ՝
Չեմ հասկանում դեպի ո՛ւր...
Դողում է պաղ նրա ձեռից
Իմ սիրտը սեւ ու տխուր:

Դուք էլ սարի սիրուն ծաղկունք
Թաքուն մի ցաւ ունիք լուռ,
Աչիկներդ լիքն է արցունք.
Սիրտներդ սեւ ու տխուր:

Ա՛խ ծաղիկներն էս աշխարհքում
Տանջւում են միշտ էսպես զուր,
Տրորւում են ու թառամում
Սրտերը սեւ ու տխուր՝

(Խումբը հեռուից)

Համբարձում եայլա՛,
Եայլա՛ ջան, եայլա՛,
Վառ ցաւեր եայլա՛,
Եայլա՛ ջան, եայլա՛:

ԵՐՐՈՐԴ ԵՐԳ

ԺԲ.

Ձըմեռան մի գիշեր կար մի հարսանիք.
Հըրճւում էր անզուսպ ամբոխը գիւղի.
Գիւղն էին իջել հովիւ պատանիք.
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի.
Ու պարից յետոյ էն հըրապարակ
Բաց արին մէջտեղն արձակ գըլխատան,
Զուռնաչին փըչեց կոխի եղանակ,
Ահել ու ջահել իրարով անցան:
Հարա՛յ են տալի — «Բաշի՛ հա, քաշի՛ ...»
Ու դուրս քաշեցին զօռով երկուսին.
Մինը մեր Սարօն, իսկ միւսն Անուշի
Անդրանիկ եղբայր գառնարած Մօսին:
Ողջ գիւղը կանգնեց պարըսպի նման,
Ջոկւեց բաժանւեց երկու բանակի,
Ամէն մի բանակն ընտրեց փահլւան,
Կանգնեց թիկունքին տըղերանց մէկի:

Գոռում են, գոչում երկու բանակից
— Սըրտապինդ կացէ՛ք, մի վախէք, տըղերք,
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջըկերք:
Ու տաքանում են տըղերքը սաստիկ,
Փէշերը հաւաք խըրում են գօտին,
Գետին են զարնում ձեռքերը հաստիկ,
Իրար են հասնում թափով մոլեգին..

Ադաթ կայ սակայն էն մութ ձորերում,
Ու մինչտ հընազանդ հընուց ադաթին,
Ամբոխի առջեւ իգիթն իր օրում
Գետին չի զարկիլ ընկեր իգիթին.

Ու իրար բռնած Սարօն ու Մօսին
Քաշում են, ընկնում խոզապարկուկի
Ընկնում են գետին ելնում միասին,
Դըժուար է իբրեւ յաղթել մէկ մէկի:
Ի զուր է գոռում ամբոխը հարբած,
Զուր սըրտատրոփ նայում աղջիկներ,
Եւ զուր է Անուշն իր շունչը կըտրած,
Սառել ու կանգնել ինչպէս մի պատկեր:
Անուշը կանգա՛ծ… Սարօն նըկատեց,
Թունդ առաւ սիրտը ու զարկեց արագ
Աչքերի առջեւ մըղլարը պատեց,
Մոռացաւ ընկեր, ադաթ ու աշխարհք,
Ու մինչդեռ Մօսին ընկերախաղի,
Կատակի տաշով թողած էր իրեն,
Ուժ առաւ Սարօն. ճըմկեց կատաղի,
Գետնեց ընկերին ու չոքեց վըրէն:
Ամբոխը թափեց հարա հըրոցով.
Վեր թըռցրեց չահել փահլաւաններին.
Եւ՝ ուրախութեան աղմուկ գոռոցով
Յաղթողին փեսի թախտի մօտ բերին:
Ցընծութեան ձայնից, ծափերի զարկից
Շարժում են դողում պատեր ու օճորք
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից,
Նայում են կանգնած հարսն ու աղջըկերք:

ԺԳ.

Վեր կացաւ Մօսին իրեն կըտրատում,
—Թող գա՛յ, գոռում է, որ բռնենք նորից
Թէ չէ նամարդը, արեւս եմ երդւում,
Էլ չի պըրծնելու երբեք իմ ձեռից:
Վե՛ր չի գըցել ինձ… ինձ խաբել է նա…
Մէյդան բաց արէք, թող մին էլ մէջ գայ,

Ու ամէն կողմից ուրախ ճըռճըռում:
Թունայի ծաղրով կանչում են, գոռում.

—Զէլա՛ւ, էդ չէլաւ,
Վէր չի գըցել դեռ,
Մօսին թող էլաւ,
Խոզապարկուկ էր...
Հա՛, հա՛, հա՛, տըղե՛րք,
Շատ էլ լաւ կ'անի,
Մէջքը թափ տուէք,
Մէջքը թափ տուէք,
Թող մին էլ բըռնի...
Հա՛, հա՛, հա՛, տըղերք
Մէջքը թափ տուէք...»

ԺԴ.

Եւ աղմըկալի հարսանքի տանից
Դուրս եկաւ Մօսին սաստիկ վիրաւոր.
Արիւն է կաթում սեւակնած սըրտից,
Գընում է ըշտապ, քայլերը մոլոր:
—Ամօ՛թ քեզ, Մօսի, թո՛ւք ու նախատինք,
Ամօթ քեզ նըման գոված իգիթին.
Մի անուն յիշիր, մի բոյի՛դ մըտիկ,
Դեռ քո թիկունքը չէր տեսել գետին:
Ինչպէ՛ս վեր ընկար դո՛ւ սարի նըման,
Երբ որ նայում էր ողջ գիւղը կանգնած...
Դո՛ւ... կուճ գաս տակին Սարօի ծընկան,
Նըրանից յետոյ երեւաս կանա՛նց...
Եկա՞ծ էր էս բանն իսկի քու գըլխին...
Ծաղրատեղ դառար բովանդակ գեղին...
Դէ մեռիր էլի՛, գետինը մըտիր,
Տանը վեր ընկիր՝ իլիկ պըտտիր...:

ԺԵ.

—Վա՜յ, վա՜յ. Մօսի ջան, ինձ մի՛ ըսպանիր,
Սըրանից յետոյ չեմ սիրիլ նըրան...
Վախենում եմ ես.,, դանակդ տեղը դիր..,
Սիրտըս դողում է տերեւի նըման...»
Խընդրում էր լալով եղբօր առաջին
Անզօր ու դալուկ իր քոյրը չոքած,
Մօսին փայլկըտուն խանչալը ձեռին՝
Ուզում էր մորթել նրան աչքը բաց:

—Դե՛ իմ անունով երդուիր, անըզգա՛մ.
Որ էլ Սարօին դու չես սիրելու,
Թէ չէ՝ տեսնո՞ւմ ես խանչալը հանած՝
Մինչեւ դաստակը սիրտդ եմ խըրելու:

—Քու ոտի հողն եմ Մօսի ջան, Մօսի
Դու քու եսիրին երդո՞ւմ ես տալիս...՝
Ես էլ Սարօին չեմ սիրում, ախ,
Տեսնո՞ւմ ես չոքած ի՞նչպէս եմ լալիս...

—Դու խաբո՞ւմ ես ինձ, սուտլիկ խաբեբայ.
Չե՞ս սիրում ախր, էն ի՞նչ է հապա,
Էն ի՞նչ է հապա, որ տեղն ենք մըտնում՝
Հեկեկում ես դու գիշերուայ մըթնում.
Էն ի՞նչ է հապա, որ դու երազում
«Սարօ ջան, Սարօ, Սարօ» ես ասում..

Մօսի ջան Մօսի, գըլխովդ շուռ գամ.
Ինձ մի՛ ըսպանիր, ինձ թող էս անգամ.
Էլ չեմ սիրիլ ես, երբ դու չես ուզում,
Էլ չեմ կանչիլ ես նըրան երազում...
Ինձ մի՛ ըսպանիր, դանակդ տար հեռու...
Քու քոյրը չե՞մ ես... իմ Մօսին չե՞ս դու...

ԺԶ.

Ու էն հարսանքից թըշնամի դարձան
Ախպէր. տըղերքը էս դէպքի համար.
Ընկեր, բարեկամ գընացին, եկան,
Կըրկին հաշտութեան չեղաւ մի հընար:
Անկոտրում Մօսին էլ ո՞ր Մօսին էր
Որ աչքը դեռ բաց, էս լուս աշխարհքում
Իրեն հարազատ քրոջը տեսնէր
Նամարդ ընկերի—Սարօի գըրկում:
Գուցէ գիշերս էլ՝ իր հերսից անքուն՝
Ուզում է ջահել քըրոջն ըսպանի.
Սարօի անունն ու սէրը թաքուն
Խանչալի ծերով սըրտիցը հանի:
Ով գիտի, գուցէ հենց էս գիշերն էլ
Իգիթ ոսոխներն, անհաշտ ու յամառ,
Մէկմէկու հօտից ոչխար են քըշել,
Մէկմէկից վըրէժ առնելու համար:
Կարող է նոյնպէս պատահել յանկարծ
Որ մէկի դէզը, արդիւնքը հընձի
Գիշերուայ ժամին հըրով բըռընկած,
Երկնահաս բոցով աստղերը խանձի:

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԳ

ԺԷ.

Ամպերը դանդաղ ուղտերի նըման
Նոր են ջուր խըմած ձորից բարձրանում.
Թարոտ թիկունքից Զաթինդաղ լեռան
Նոր է արեւը պըռունգը հանում,
Գիւղում աղմուկով իրար են անցնում,
Կըտեր ծերերին կանայք հաւաքուած,
Տըղերքը դէպի քարափն են վազում
Հըրացաններ կիսերից բըռնած:

ԺԸ.

Եկաւ վիթխարի ծերունի մի մարդ
Կանգնեց վրդովւած տղերանց մէջին.
Մատը դէպի ձոր մեկնելով հանդարտ
Էսպէս նա պատմեց զօռ տաղով չիթխին:
—Էս գիշեր, կէսը կ'ըլնէր գիշերուայ,
Դեռ չէի կըպցել աչքըս՝ տեղի մէջ.
Քունս էլ է կորել, ջանս էլ են վաղուայ
Ամէն մի քանից մընացել եմ խեղճ..
Հա՛, հալալ կէսը կ'ըլնէր գիշերւայ,
Շունը վերկացաւ ու կըռան վրայ.
Հեյ հե՛յ, կանչեցի, ձէն տըւող չեղաւ...
Շունը գազազեց, շունը վեր կալաւ..
Հե՛յ գիտի, ասի ինքըս իմ միջում,
Ինչ է մընացել առաջւան տըղից:
Քընում էի վաղ մենակ արխաջում
Մի ձէն լըսելիս վեր թըռչում տեղից...
Էն էի ասում, քընել չէի դեռ
Կը լինէր տասը գիշերւայ կէսը
Երկու մարդկային սեւ կերպարանքներ
Շան առջեւ փախած՝ ցած իջան դէսը:

ԺԹ.

Էս որ լըսեցին, դես ու դեն ցըրւած
Տըղերքը ճեպով ձորը ներս մըտան,
Ու մըտի տակին, ճամբիցը ծըռուած,
Երկու մարդու թարմ ոտնատեղ գըտան:
Ամբողջ մի ամիս խումբը զինավառ
Սարեր ու ձորեր ոտնատակ տըւեց
Չոբան Սարոին գըտնելու համար,
Որ սարիցն իջաւ Անուշին փախցրեց:
Մի ամիս յետոյ տղերքն եկան տուն.
Գովելով նըրա արարքը ճարպիկ,

—Հալալ է տղին, ա՛յ իգիթութիւն,
Ահա թէ ինչպէս կը փախցնեն աղջիկ։
Մենակ Անուշի ախպէրը—Մօսին.
Մընաց հանդերում. երդում կերաւ նա.
Ու որ էլ շինեն, նրանց միասին
Գըտնի՝ կոտրի, սիրտը հովանայ։
Մընաց հանդերում։ Եւ ահա մի օր,
Քաղւոր կանանց մէջ, մըրրան հետ թափուն,
Ծորերը պատռած, տխուր, գըլխակոր
Անուշը ձորից եկաւ հօրանց տուն։

Ի.

—Աղջի՛, Վարդիշաղ. թէ հոգիդ սիրես,
Մի գարի՛դ գըցիր, տես ինչ է ասում.
Աչքըս խաւարի, տեսիլք դառնում ես,—
Տեսիլ եմ տեսել գիշերս երազում։
Մի մութ ձորի մէջ, մի նեղ ձորի մէջ
Անբախտ Սարօի ոչխարը կանգնած
Լեզու էր առել ու խաղ էր կանչում
Ու խաղ էր կանչում ձէն ձէնի տըւած...
Մի գարիդ գըցիր, թէ արտով խընդաս,
Էս երազն իսկի ես լաւ չեմ փորձել.
Ողորմած Աստուած, Քու դուռը բանաս,
Քու ոտի հողն եմ—Դու ես ըստեղծել...
Անբան գառները մութ ձորի միջին
Խաղ էին կանչում ու ձէնով լալիս,
Սարօի նշանն էր նրանց առաջին
Աղլուխ էր առել ու պար էր գալիս
—Աղջի՛, Մանիշակ, վատ բան ես տեսել,
Գարիս էլ, ահա, էնպէս դուրս եկաւ.
Էս ճարն, էս բարին... Սարօն է ես էլ...
Տե՛ս, ահա, Սարօն սեւ ճամբէն ընկաւ...
Աստուած խընայի չահել ջիւանին,
Աստւած խընայի իր անբախտ նանին...

ԻԱ.

Ու ման է գալի սարերը ընկած
Սարօն փախցրած եղջերուի նման,
Օրհասն առաջին, գընդակին ետեւից
Հանդերը դըժոխք, ընկերը դուշման.

Ու երբ իրիկուն հանդարտիկ ու լուռ
Սարերից իջնում, խաւարն է պատում,
Նըրա բոցաթեւ ողբում է տըխուր
Ընկեր սարերին խօսում, գանգատւում:

«Բարձըր սարեր, ա՛յ սարեր
Ձեն եմ տալի «վա՛յ» սարե՛ր,
Դուք էլ ինձ հետ ձեն տըւէք,
Իմ դարդերի թաց սարեր:

Այս իմ՝ բութես ձեզ արած,
Ձեր ձորերին, ձեզ արած,
Կ՚ուզեմ կորչիմ անգիւման,
Էս աշխարհքից բեզարած:

Կորչիմ բեզար դատարկուն.
Բար-սարեւար դատարկուն,
Մեռնեմ պըրծնեմ էս օրից,
Բաղքի առնեմ դադար-քուն:

Ա՛խ կը մեռնեմ՝ ամա նա
Վա՛յ թէ յանկարծ իմանայ.
Ես ազատւեմ էս ցաւից,
Աչքը լալով նա մընայ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԳ

ԻԲ.

Լալիս է Անուշն երեսին ընկած,
Կանգնած են շուրջը կանայք հարեւան,
Ու խօսք չեն գտնում ասեն անարգւած,
Տարած ես բերած, անբախտ աղջըկան:
Աստուած խընայեց կոպիտ ախպէրը
Հեռու հանդերից դեռ տուն չէր դարձել,
Իսկ խոժոռադէմ ալեւոր հէրը
Ընկաւ փըրփրած թըքել անիծել:

—Դուրս գընա, կորի՛, ա՛յ լիրբ, անըզգա՛մ,
Սեւ ու սուգ լինի թագ ու պըսակըդ.
Կորի՛, չերեւաս աչքիս միւս անգա՛մ,
Գետինը մըտնի երկար հասակըդ։
Տեսա՛ր որ նըրան ասում է Մօսին,
Չեմ ուզում, տեսար, նըրան հէրն ու մէրդ
Դու քանի՞ գըլուխ ունիս քո ուսին,
Որ վէր ես կենում փախչում նըրա հետ:»
Խըռնւած գիւղացիք կըտուրից իջան
Մեղմելու կոպիտ բարկութիւնը հօր,
Յայտնըւեց նոյնպէս գիւղի քահանան,
Մի պատկառելի հըսկայ ալեւոր:
—Դո՛ւրս գընացէք, դո՛ւրս, գոչեց տէրտէրը,
Անուշը թողէք ուղիղն ինձ ասի,
Թողէք նա յայտնի իր միտքն ու սէրը,
Նըրանից յետոյ բանը կը պարզի:
Մի՛ լար, իմ աղջի՛կ. ինձ խոստովանի՛ր,
Սիրո՞ւմ ես նըրան, քու կամքո՞վ փախար...
Եթէ սիրում ես՛ էլ դարդ մի՛ անիր,
Պիտի պըսակեմ ես ձեզ անպատճառ...
—Ի՞նչ ես հառաչում... էն ո՞վ էր, մի տե՛ս,
Որ դուրսը յանկարծ աղմըկեց էսպէս...
Ո՞վ է ըսպանել... Մօսի՛ն..՝ ո՛ւմ... ո՛ւր...
—Անո՛ւշ, հէ՛յ Անո՛ւշ..ջուր հասցրէ՛ք, ջո՛ւր..»

ԻԳ.

Ինչպէս մի հեղեղ վեր կենար յանկարծ,
Երկընքի մըրկած ամպերից իջնէր,
Ինչպէս փոթորիկ սաստիկ սըրընթաց,
Գիւղից սըլացան մի խումբ կըտրիճներ:

Ցաւից տաքացած էլ բան չեն հարցնում,
Թըռչում են, ասես ահից հալածուած,
Ու նըրանց առջեւ ահռելի բացւում,
Թըշշում է ձորը արիւնով լըցուած:
Գիւղը դատարկւեց մի ակընթարթում,
Բարակի գըլխին կանգնած անհամբեր,
Լո՛ւռ սըրտատըրոփ ականջ են դընում,
Նայում են ներքեւ... ձէն չի գալի դեռ,
Դեբեդն է մենակ անդընդում՝ յուզւած՝
Խըլաձայն ողբով սողում դէպի ցած:

ԻԴ.

Ու մարդասպանը դուրս եկաւ ձորից,
Դեմքը այլայլուած, քայլուածքը մոլոր.
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
Եւ կերպարանքը փոխուած է բոլոր:
Առանց նայելու մարդկանց երեսին,
Առանց խօսելու, սեւակնած, դաժան,
Մօտեցաւ սրահին, կախ տըւաւ սընին
Սեւ հրացանը, սեւ օձի նըման:
Պապանձւեց նոյնպէս ամբոխը մեխւած,
Ոչ ոք ծըպըտալ չի համարձակւում,
Մենակ մի հոգի անզուսպ կատաղած՝
Հարա՛յ է կանչում, երեսը պոկում:
Մեռած չոբանի պառաւ նանն է նա՝
Ցաւից խելագար բառաչում, լալիս

Տարաբախտ ծընող վազում է ահա,
Ձորիցն է տըխուր գոռոցը գալիս:

ԻԵ.

Սըգաւոր կանայք նըրա ետեւից
Հարայ կանչելով ձորը վազեցին,
Իրենց կորցրածն էլ յիշելով նորից՝
Դիակի շուրջը կարգով շարեցին:
Իգիթին վայել արտասուաց ողբով
Լաց ու կոծ արին ձէն ձէնի տըւած:
Տըղերքն էլ մըթին, լուռ ու գըլխակոր,
Մընացին մօտիկ քարերին նըստած:
Ողբացին անշունչ դիակի վըրա
Անտէր մընացած ոչխարի նման,
Անսիրտ անէծքով յիշեցին նըրա
Անճար մընացած խեղճ եարի նման:
Եւ նըրա նման, որ ընկերները
Հանդը գընալիս Սարօ կը կանչեն,
Որ սարից փախած սոված շըները
Կըտերը պիտի ոռնան. կըլանչեն:
Ծանըր չումբախը, գըլուխը մեխած,
Օճորքում դըրած պիտի մըրոտի,
Երկար խանչալը, պատիցը կախած
Պատենում մընայ ու ժանգը պատի...
Որ հով սարերի սովորած նանը
Էլ սար չի գընայ առանց Սարօի,
Սեւ շորեր հագած կը նըստի տանը,
Անցած օրերը միտը կը բերի:
Եւ ամէն մի խօսք, մի յիշողութիւն
Կըտրատում էին սիրտը ծեր նանի,
Եւ պաղատում էր նա մեռած որդուն
Մի անգամ խօսի, աչքը բաց անի:
—Ընչի՞ չես խօսում, ընչի՞ չես նայում,
Իմ օր ու արեւ, կեանք ու ջան՝ որդի,

Դու իմ գերեզմանն ընչի՞ ես խնդրում,
Թըշնամի որդի, դաւաճան որդի...»
Բայց չէին բացւում աչքերը փակւած
Շուրթերը սառել, չորացել էին,
Նըրանց արանքից ատամները բաց,
Սպիտակ շարքերով երեւում էին:
Ու նա կատաղած՝ յանդուգն անեծքով
Ծառս եղաւ դուշման երկընքի դիմաց,
Եւ հայհոյում էր, եւ կուրծքը ծեծում,
Եւ լալիս էին ձեն ձենի տըւած...
«Կարմիր արեւից ընկած, Սարօ ջան...
Կանանչ տերեւից ընկած, Սարօ ջա՜ն...
Արեւ հանգաւ, Սարօ ջա՜ն,
Գիշերս ընկաւ, Սարօ ջա՜ն...»
Գիշերը իջաւ թանձրացաւ մութը
Եւ նըւաղեցին ձեները սըրտում,
Յոգնեցի՜ն, հանգա՜ն... ծերուկ Դեբեդը,
Սըգում էր մենակ խաւար անդընդում:
Սըգաւոր գետը
Ծեր Դեբեդը
Սիրտը քըրքրած;
Ջուրը փրփրած,
Քարոտ ափին,
Լեռ քարափին
Դեռ ծեծում է,
Հեծեծում է...

ԻԶ.

Եւ մի քանի ընկեր տըղերք
Ձորում, գետի եզերքին,
Փոս փորեցին ու սըրտաբեկ
Հողին տըւին հովւի դին.
Ծառ ու ծաղիկ՝ սըւսըւալով
Բոյր խընկեցին դիւրեկան.

Տեր Դեբեղն էլ ահեղ, ձենով
Երգեց վըսեմ շարական:
Ու տըղերքը տըխուր ու լուռ
Վերադարձան դեպի տուն,
Ձորում թողած մի սեւ բըլուր,
Մի գերեզման անանուն:

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԳ

ԻԷ.

Գարունն եկավ, հավքերն եկան.
Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան
Մի աղջիկ եկավ, մի՜ մենակ քաղւոր,
Գետի եզերքին շըրջում է մոլոր,
Շըրջում է մոլոր. խընդում ու լալիս,
Երգեր է ասում ու ման է գալիս:

—Սիրուն աղջի՛կ, ի՛նչ ես լալիս
Էդպես մենակ ու մոլոր,
Ի՛նչ ես լալիս ու ման գալիս
Էս ձորերում ամեն օր,
Թե լալիս ես՝ վարդ ես ուզում՝
Մայիս կը գայ, քիչ էլ կաց,
Թե լալիս ես, եարդ ես ուզում,
Ախ նա գնաց. նա գնա՛ց...
Արտասուելով, լալով էդպես
Ետ չես դարձնի էլ գերիդ,
Ինչո՞ւ ի զուր հանգցընում ես
Ջահել կըրակն աչքերիդ:
Նըրա անբախտ շիրմի վըրա
Պաղ ջուր ածա աղբիւրի,
Դու էլ գընա նոր սեր արա,
Էսպես է կարգն աշխարհի:

—Շնորհակալ եմ, անցուո՛ր ախպէր,
Աստւած պահի քու եարին.
Ճամբիդ վերջում կանգնած է դեռ
Անուշ ծիծաղն աչքերին...
Ուրախ սըրտով դուք ձեր սէրը
Վայելեցէք անթառամ
Ինձ արցունք է տըւել Տէրը,
Ես պիտի լամ, պիտի լամ...»

Ու ման է գալիս,
Երգում ու լալիս։
Երգերը անկապ, երգերը տըխուր,
Արցունքի նման հոսում են ի զո՛ւր.
Բայց լալիս է նա ու երգեր ասում
Ու միտս էն անմիտ տրտունջքն է խօսում,
Թէ ի՛նչպէս յանկարծ աշխարհքը փոխւեց,
Ի՛նչպէս դատարկւեց կեանքում ամէն բան,
Սարերը մընացին որբ ու անչոբան,
Թէ ի՛նչպէս յանկարծ նա գընաց հեռու,
Էլ չի՛ դառնալու, էլ չի՛ դառնալու...
«Ե՛տ դառ, ե՛տ, իգի՛թ,
Ե՛տ դառ, անիրա՛ւ,
Կարօտւած եարիդ
Աչքը ջուր դառաւ։
Ոչխարդ էն սարով
Շո՛ւռ տուր, տո՛ւն արի,
Փախի՛ր գիշերով
Ու թաքուն արի...

Ա՛խ, էն կանանչ սարի լանջին
Ո՞վ է քընած էն տըղէն,
Վըրէն քաշած սեւ եափընջին
Կուռը հանած էն տըղէն...
Ջա՛ն, իմ եարն է, ջանի՛ն մեռնեմ,

Ծաղկի հոտով ես հարբել,
Սարի լանջին. հովի մեջին
Մուշ-մո՛ւշ. անուշ մըրափել:

Վե՛ր կաց, վե՛ր, բզի՛ք,
Վե՛ր կաց. անիրա՛ւ.
Ոչխարըդ բեր կի՛ք,
Որը ճաշ դառաւ...
Արի՛, ջա՛ն, արի՛,
Քու գալուն մեռնեմ,
Թո՛ւխս չորան. արի՛,
Կարոտըս առնեմ.—

Տեսէ՛ք, տեսէ՛ք, դափ ու զուռնով
Ի՞նչ հարսնիք է դուրս գալի,
Մարդիկ ուրախ, բօն ու ծիւնով
Ձի են խաղում, չափ տալի...
Աղջի՛, աղջի՛, մըտիկ արէք,
Էս ի՞նչ տեսիլք ես տեսայ.
Ո՞վ էր տեսել էսպէս հարսնիք—
Ո՛չ հարս ունին, ո՛չ փեսայ...

Բերում են հըրէն
Ամա՛ն, մեր տան դէմ...
Վե՛ր դըրէք, վըրէն
Հիւսերըս քանդեմ...
Ես է՛լ եմ գալիս,
Էդ ո՛ւր էք տանում...
Ինձ էլ թաղեցէք
Իր գերեզմանում...
Ա՛խ, չէ՛, ամա՛ն, ասում են դա
Մի դիակ է ջո՛ւռ, սառած,
Արիւնը չոր դէմքի վըրա,
Աչքերն անթա՛րթ. սպտակած:

Նա սիրուն էր, անուշահոտ,
Աչքերը ջի ծիծաղով,

Նա գալիս էր ցողոտ, շաղոտ,
Հանաքներով ու խաղով...

«Արի՛, ջա՛ն, իգիթ,
Արի՛, անիրաւ,
Կարօտցած եարիդ
Աչքը ջուր դառաւ:
Էլ մի՛ ուշացնի,
Ես շատ եմ լացել,
Էլ մի՛ լացացնի
Ես շատ եմ լացել....

Տե՛ս, կը խռովե՛մ,
Լաց կըլեմ ես է՛լ...
Չիմ խօսիլ քեզ հե՛տ...
Չեմ սիրել քեզ է՛լ...»

ԻԸ.

Անըրուեղի վըշվըշում է
Պըղտոր ջուրը Դեբեդի,
Նըրա ափին կանգնում է,
Մենակ շիրիմն իգիթի:
Նըրա շուրջը հեզ սիրունին
Թընդացնում է ողբ ու լաց,
Ձեն է տալիս իր Սարօին
Ու պըտտւում մոլորուած:
Ու հոսում է գիշեր-ցերեկ
Արցունքն անքախս աղբըրկայ,
Բայց իր սիրած տըղան երբէք
Չըկա՛յ, չըկա՛յ ու չըկայ...,
Վըշվըշում է գետը — վո՛ւշ, վո՛ւշ,
Ու յորձանք է տալիս յորդ,
Եւ կանչում է՝ «Արի՛, Անուշ,
Արի՛, տանեմ եարիդ մօտ...»

—Անո՛ւշ. այ ա՛ղջի, Անո՛ւշ, տո՛ւն արի...
Կանչում է մէկը վերեւից, կանչո՛ւմ,
Լո՛ւռ են ձորերը, լո՛ւռ են անտեղի,
Դուշման Դեբեդն է մենակ մռընչում.

Վուշ-վո՛ւշ, Անո՛ւշ, վո՛ւշ-վո՛ւշ, քուրի՛կ,
Վո՛ւշ քու սերին, քու եարին,
Վուշ վո՛ւշ, Սարօ՛, վո՛ւշ-վո՛ւշ, իգի՛թ,
Վո՛ւշ քու սիրած սարերին...

ԻԹ.

Համբարձման գիշեր, են դիւթիչ գիշեր,
Կոյս հրաշալի, երջանիկ վայրկեան.
Բացւում են ոսկի երկնքի դռներ,
Ներքեւ պապանձւում, լռում ամէն բան,
Եւ Աստուածային անհաս խորհրդով
Լցւում բովանդակ Նրա սուրբ զօրով:

Էն վեհ վայրկեանին չքնաղ գիշերի՝
Երկնքի անհո՛ւն, հեռու խորքերից
Անմուրազ մեռած սիրահարների
Աստղերը թռած՝ իրար են գալիս,
Գալի՛ս՝ կարօտով մի հեղ համբուրւում
Աշխարհից հեռո՛ւ, լազուր կամարում:

ՎԵՐՋ

ՎՐԻՊԱԿ.—5րդ էջը. 15րդ տողին վրայ Թաշիանոսեան անունը կարդալ Թաղիանոսեան, իսկ 25րդ էջին 20րդ եւ 21րդ տողերուն միջեւ աւելցնել Ը. տառը:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

ՄԵԾ ՕՓԵՐԱՆ

ԱՆՈՒՇ

Հոլիվուտի մէջ պատրաստուած
առաջին հայերէն խօսուն ֆիլմը

4 ՄԱՐՏ 1948էՆ ՍԿՍԵԱԼ

Կը ցուցադրուի

Փանկալթիի նորակառոյց

«ԻՆՃԻ» ՍԻՆԷՄԱՅԻՆ ՄԷՋ

❀

ԱՆՈՒՇ օփերան շարժանկարի վերածուած է ամերիկեան «Քրաուն» ընկերութեան կողմէ.

ԱՆՈՒՇի դերը կը կատարէ Օր. Զարուհի Էլմասեան:

«AKIN» Basımevi — İstanbul